

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20 – ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 1994-1995, 1996-1997  
ԵՎ 1998-1999 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ  
ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

**որոշում եմ՝**

1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բռնցքամարտի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N1 հավելվածի .
- 2) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բռնցքամարտի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N2 հավելվածի.
- 3) Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 1994-1995, 1996-1997 և 1998-1999 թվականներին ծնված պատանիների և երիտասարդների բռնցքամարտի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Կազմկոմիտեին /Նախագահ Գ. Բադալյան/՝

- 1) ապահովել մրցումների անցկացման մասսայականությունը.
  - 2) կազմակերպել մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություն.
  - 3) մրցումների ավարտից հետո եռօրյա ժամկետում ներկայացնել գրավոր հաշվետվություն:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ